

ՄՇԱԿ

Տար ան զինը 10 բուրլի, կես տարվանը 6 բ.
Առանձին համարները 7 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեղումով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իրաքանչիւր բառին 2 օպէկ.

ՆԵՐԿԱՅ 1890 ԹԻՒԱԿԱՆԻՆ

„ՄՇԱԿ“

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Կը հրատարակվի Թիֆլիսում, նոյն գիրքով և նոյն պրոպագանդայով: Մենք ստանում ենք սեփական ՀԱՅՈՒՄՆԵՐԻ.
«ՄՇԱԿ» տարեկան զինը 10 բուրլի է, վեց ամսվանը 6 բուրլի.
Գրվել «ՄՇԱԿ» կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Բարձրագույն և Բարձրագույն փողոցների անկիւնում, Թամարիայի տանը).
Կայտարարութիւն ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿ» գրվելու համար պէտք է դիմել հետևեալ հասցեով. ТИФЛИСЪ, Редакция газеты «МШАКЪ», իսկ արտասահմանից. Tiflis, Rédaction du journal arménien «MSCHAK».

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐԳԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Շիրան տեղափոխելու և գինին պահելու ամանները. Գրեթե ամեն տեսակի ընկերութեան նիստեր. Վարժուհիների փոխադարձ օգնութեան ընկերութիւնը. Ներքին լուսիններ.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Աննապատակ աղմուկներ հանող կուսակցութիւն. Նամակ թիւրքախոս. Արտաքին լուսիններ.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԱՅՈՒՄՆԵՐԻ.—ԲՈՐՍԱ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍՏՐԱԿԱՆ. Բժշկի զբոյցները.

ՆԵՐԳԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՇԵՐԱՆ ՏԵՂԱԲՈՐՈՒՆԻ ԵՒ ԳԻՆԻՆ ՊԱՆԵՆԵՐԸ.

Շիրան տեղափոխելու համար կան մի քանի տեսակ ամաններ. մեր երկրում ընդհանրապէս գործ են ածում կարասներ և ուռմարներ. բայց պէտք է գործածել փայտեայ ամաններ՝ կիսա-տակառներ և տակառներ:

Կարասները գինեգործներին շատ ծանօթ են, այդ պատճառով և աւելորդ է մտնել զրանց մասնաւոր նկարագրութեան մէջ: Գա մի մեծ բնութիւն, որի ներքը նախ քան գինի կամ շրիւղ լցնելը՝ մեղրամոմով մշտակ շապիկ են անցկացնում: Այդ ա-նում են հետեւեալ կերպով: Գետնի վրա փռում են մի քանի (գորդ) կամ մի հին կարպետ, դրա մէջ-

տեղը կողքի վրա պահեցնում են նախապէս մի փոքր տաքացրած կարասը և ապա հալած մեղրամոմը լցնում են նրա մէջ և արագ կերպով կարասը շուռէնում են անում զանազան ուղղութեամբ, որպէս զի հալած մեղրամոմը կարասի բոլոր մասերով էլ անցնի, որի հետեւեալ լինում է այն, որ կարասի միջին մակարդակը ծածկվում է մի շերտ մեղրամոմով:

Ներքինն էլ է ծանօթեան համար մեղրամոմի փոխարէն ճրագու են գործ ածում: Բայց պէտք է մեղրամոմը գերադասել, որովհետեւ եթէ ճրագուէ շապիկ են քաշում, ամեն 3—5 տարին մի անգամ պէտք է նորոգել, այն ինչ մեղրամոմի շապիկը դիմանում է 8—10 տարի:

Ներանցիքը այդ գործողութեանը անուանում են «դուրս կանգնեցնել»:

Կարասի զարդ երեսը հիմքից մինչև կէսը պատում են հետեւեալ ձևով՝ պատրաստած նիւթով: Նոր մօրթած կենդանիների թարմ արիւնից լցնում են մի ամանի մէջ և անմիջապէս կամ ձեռքով և կամ փայտեայ ձողով արագ կերպով հարում են, որպէս զի արիւնը լերթ չը գայ: Ապա վերցնում են կիր և դարձնողներին հնոցում մնացած անմաքուր հանքային մասերը (զրան երկաթէ կղզիքներ են ասում) լաւ ծեծած, փոշի դարձրած և խառնում իրար հետ, յետոյ ա-րիւնով շաղախում են և ջրալի ցնի կաղնում: Այդ ցնիով պատում են, ինչպէս ասեցինք, կա-րասի հիմքից մինչև կէսը, շատ անգամ էլ մինչև

երեսներ: Ներքուստ մեղրամոմի և կամ ճրագուէ շապիկ քաշելու նպատակը գինու ծծուկն արգե-լեն է, իսկ դուրսը շապիկ քաշելը կարասը խո-նաւորութիւնից զերծ պահելու համար է: Կարասի ծծելը շատ վտանգաւոր է նախ՝ որ գինին պա-կասում է, ալիօլը նուազում է, դինու գլուխը կիսատրում է և բացի այդ կարասի դուրսը խո-նաւանում է և տխրում, որը փայցնում է թէ գինու համը և թէ զանազան հիւանդութիւնների պատճառ է դառնում: Սովորական կարասները տանում են 25—35 վէդրո: 17 վէդրանոցը կոչ-վում է բիրդադ:

Այս թէ ինչպէս են կարասները գերազմում տեղափոխում: Նախ և առաջ պատերի շուրջը 1 կամ 1½ արշին բարձրութեամբ, այսպէս ասած, խարաչու են կապում: Գրա համար երկու տակ, միմեանց զուգահեռական և հօրիզոնական դիր-քով գերաններ են ամրացնում փայտեայ արհե-րի վրա, և ապա տեղ տեղ լաւապակեային են կտրում, որի մէջ պէտք է կարասները տեղադ-րել:

Կարասը չը պիտի յենուի խարաչուի վրա: Ու-րիշ խօսքով խարաչուն կարասի ծանրութիւնը կրելու համար չէ, այլ նա պիտի կարասին կող-քերից բռնի, որ նա ալ ու ձախ չը թեքվի:

Կարասները ինչեցնում են այդ լաւապակեային մէջ մինչև կողմերին շուրջով և տակից փայ-տեայ պատուանդաններ են դնում, որ կարասը այդ դիրքով էլ պահվի իսկ եթէ կարասի մի որ և իցէ կողմը անմիջապէս խարաչուի եզերքներին չէ կպչում, պէտք է մի փայտեայ սեպով ամրաց-նել:

Կարասները ծառայում են թէ շրման գինու փոխելու և թէ արդէն պատրաստած գինին պա-հելու համար:

Ներքին կարասները խարաչուի վրա չեն յար-մարեցնում, այլ հիմքը հորում են դնում: Եթէ և երբեմն էլ ամբողջապէս մինչև բերանը, այդ դի-պոսածում կարասի դուրսը մասը ամբողջապէս ա-րիւնից, կրկն և երկաթի անմաքուր հանքերից չինած նիւթով շապիկ քաշած է լինում:

Գրա նպատակն է, ի հարկէ, գինին պահել համեմատաբար տաք տեղ, որի ջերմութիւնը ան-փոփոխ է:

Շատ անգամ էլ գինին պահելու կամ տեղա-փոխելու համար գործ են ածում կաշուց կարած

անօթներ (ուռմեր): Այդ անօթները ստանալու համար կենդանիներին մօրթելուց յետոյ տիկ են հանում, այսինքն կրծքի վրայից կաշին չեն ճղում, այլ բերանից սկսելով կաշին շուռ են տալիս և այդպէս ամբողջը հանում:

Կտրած տեղերը կարում են և երկու անգը են թողնում՝ մէկը վրի տեղը, որտեղ լցնում են, միւսը առաջին օտներից մէկն ու մէկը: Կենդա-նու մազերը ներսի կողմն է լինում: Ներսից կարում են, իսկ դրսից ճրագուէ լցնում կամ կովի կաշիից ստացածին ասում են՝ ուռմեր, «որթիկ» կոչում, այժմին՝ տիկ, իսկ ուլինը (այժի ճուտ) տկճոր:

Միւս անգամ կը խօսենք կիսատակառների և տակառների մասին:

Ներան.

Մ. Մուսիսեան

ԳԻՆԻՆԱՆՏԵՍԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՆԻՍՏԸ

Ներքալթի, փետրվարի 27-ին, Կովկասեան Գիւղատնտեսական ընկերութեան նիստը բազմա-մամարդ էր: Նիստի սկզբում նախագահը յայտ-նեց, որ այդ օրը լրանում է Գիւղատնտեսական ժողովի հիմնադրութեան քառասուն տարին և և այդ առիթով առաջարկեց ոտի կանգնելով պատեւել իշխան Վօրոնցովի յիշատակը, որը հիմ-նադրի է եղել այդ ընկերութեան: Յետոյ կար-դացվեցան իշխան կառավարչապետի և պետական կայուածների միւնիստրի նամակները, որոնք յայտնում են, թէ Բարձրագոյն հրամանով՝ Կով-կասեան Գիւղատնտեսական ընկերութիւնն այ-սուհետեւ անուանվում է Կաշաքապէս Կով-կասեան Գիւղատնտեսական ընկերութիւն:

Նախագահի առաջարկութեամբ ժողովը պատ-կեց նոյնպէս հանդուգեալ վրացի հնագէտ Բաք-րաձէի յիշատակը: Ապա պ. Ա. Քալանթար կարդաց մի զեկուցում: Չեկուցումը սկսվեց մի պատմական կարճ տեսութեամբ բոլոր բնագէտների ժողովներին, որոնք մինչև այ-սօր եղել են Ռուսաստանում: Չեկուցման ա-մենազլխաւոր մասը իսկապէս համառօտ տեղե-կութիւններ էին բոլոր այն զեկուցումների մա-տին, որոնք կարդացվել են «Բնագէտների ժողո-վի» զեկուցատնտեսական բաժնում: Այդ բաժնում,

ԲԱՆԱՍՏՐԱԿԱՆ

ԲԺՇԿԻ ԶՐՈՅՑՆԵՐԸ

Այլալի յատկութիւն ունեցող զէզինֆեկցիա-կան նիւթերը խառնվելով առողջ մարդկերանց թարմ արտաթորութիւնների հետ, որոնք ինչպէս յայտնի է թթու յատկութիւն ունեն, կարող են այդ արտաթորութիւնները խօլեբային միկրօբների աճման բուն դարձնել, եթէ մի օր և իցէ կերպ խօլեբային միկրօբը մտնէ այդ արտաթորութիւն-ների մէջ, իսկ եթէ ալիւլի յատկութիւն ունե-ցող զէզինֆեկցիական նիւթերը թանգութեան պատճառով փոքր քանակութեամբ են գործ դըր-վում, աւելի պիտի նպաստեն խօլեբային միկ-րօբների աճմանը, ուրեմն մեր մէջ տարածված կրակի մոխրով (որ չօր յատկութիւն ունի) ար-տաթորութիւնների զարգացումը ռիչապեն-լու սովորութիւնը, խօլեբայի համաճարակման ժամանակ միկրօբների աճմանը կարող է նպաս-տել և այդպիսով զարգացումը ռիչապեն-լով աւելի վնասակար հետեւանքներ ստանալ:

Թթու յատկութիւն ունեցող զէզինֆեկցիական նիւթերի նպատակայարմար լինելը գեռ վաղուց էր յայտնի: Կոխի և Բամբուի վերջին հետազո-տութիւններն էլ հաստատում են որ խօլեբային

միկրօբները շատ արագութեամբ են արմատա-խիլ լինում փոքր ինչ թթու յատկութիւն ունե-ցող հեղուկների մէջ անգամ, և եթէ այդ յատ-կութեամբ հեղուկների մէջ կը գտնվի հալված զրուքեամբ և սուլեմայի ալիւլիսի մի քանակու-թիւն, որ հեղուկի մէջ ընկղմած պղնձէ թերթիկը անդիկայ աւազում աւազում ծածկվի (սուլեմայի անդիկայ և խօլեբայի զարգացած մի քանակութիւն է—ДВУХЛОРИСТЫЯ РТУТЬ), այն ժամանակ այդպիսի խառնուրդի միկրօբա-լինջ յատկութիւնը աւելի հաստատ է, քանի որ սուլեմայի ամենաթող ջրախառնուրդն անգամ, ինչպէս էլ որ հետազոտութիւնները հաստատում են, թէ խօլեբային և թէ միւս ախտածին միկ-րօբներին արմատախիլ են անում:

Այս բոլոր մեր ասածներից մենք պիտի ըն-դունենք ուրեմն, որ խօլեբային արտաթորու-թիւնները զէզինֆեկցիական ենթարկելու համար պիտի գործ դնենք ալիւլիսի զէզինֆեկցիական միջոցներ, որոնք թթու յատկութիւն ունենալով, պարունակում են իրանց մէջ և սուլեմայի մի ո-րոշ քանակութիւն, հալված զրուքեամբ:

Մասնաժողովի հետազոտութիւններից երե-ւաց օր այդ նպատակին համապատասխանում է սուլեմայի, խօլեբային կի (ХЛОРИСТЫЙ ЦИНК) և կարբօլեան թթու և աւա-սուլեմայի, կարբօլեան թթու և աւա-ծծմբապղնձի (МЪДНЫЙ КУПОРОСЬ) մի որոշ քանակութեամբ խառնուրդը: Փորձերը հաստա-

տեցին որ մի մաս կղզկանքից և 5—10 մաս մէ-զից բաղկացած արտաթորութիւնները, վերոյի-շեալ զէզինֆեկցիական նիւթերի խառնուրդի ազդեցութեամբ, բուսական երկրորդ ժամանակ—մօտ 60 օր մնում էին թթու յատկութեամբ և նրանց մէջ ընկղմած պղնձէ թերթիկը կէս ժամ-վայ միջոցին ծածկվում էր անդիկայ ամալգա-մայով (որ ցոյց է տալիս սուլեմայի հալված դը-րութիւնը), մի և նոյն ժամանակ տոկոսն ժանդացուցական դիտողութիւնը միկրօբների և նրանց սերմերի (СПОРЫ) ներկայութիւնը չէր յայտնում: Մասնաժողովը ուսումնասիրելով և միւս զէզինֆեկցիական միջոցների ներգործու-թիւնը, որոնք խօլեբային միկրօբներին բնաջն-ջելու համար էին առաջարկված, գտաւ անհա-տատ և ապարդիւն:

Մասնաժողովը՝ վերոյիշեալ խառնուրդը կաղ-մող զէզինֆեկցիական նիւթերի միկրօբալինջ յատկութիւնը փորձեց և առանձին առանձին մինչև անգամ աւելի մեծ քանակութեամբ, նա-նապէս փորձեց ծծմբապղնձից և կարբօլեան թթու և ապարդիւն բաղկացած խառնուրդը, այլ և խօ-րացինկից և կարբօլեան թթու և առաւելուրդը, նմանապէս սուլեմայի և կարբօլեան թթու և առաւելուրդը: հետեւանքները անբաւականացուցիչ էին. փորձերից երեւաց օր թէ սուլեման առա-նձին վերցրած, և թէ կարբօլեան թթու և հետ-խառն, իբրև միկրօբալինջ միջոց թոյլ է, մինչև անգամ մեծ քանակութեամբ էլ վերցրած, և այն

հասարակ պատճառով, որ սուլեման դուրս է իր հալված դրութիւնից—առանձնանում է ար-թորութիւններին նիւթումից առաջացած այլ և այլ նիւթերի ազդեցութեամբ: Մի կարծեք, ըն-թերցող, որ սուլեմայի և կարբօլեան թթու և առաւելուրդը թթու յատկութիւն պէտք է տայ արտաթորութիւններին, և հաստատապէս ներ-գործէ իրեն միկրօբալինջ միջոց: Կարբօլեան թթու և առաւելուրդը միայն անուան է թթու և առաւելուրդը, բայց դա քիմիական թթու և առաւելուրդ է, թթու յատկութիւն չունի և ինչպէս էլ մենք զէզինֆեկցիական նիւ-թերին նուիրված մեր անցեալ զբոյցների մէջ նկարագրեցինք, կարբօլեան թթու և առաւելու-րդի ձիւթի գլխաւոր բաղադրութիւններից մէկն է և որից քիմիական եղանակներով է ստացվում, թէպէտ և անուանում թթու և առաւելուրդ, բայց յատկութեամբ թթու և առաւելուրդ չէ ի հարկէ, եթէ մենք սուլեման ալիւլիսի մեծ քանակութեամբ վերցնենք որ արտաթորութիւններին կարողանայ թթու յատկութիւն տալ, ուրեմն և այդպիսի արտաթո-րութիւններին մէջ ընկղմած պղնձէ թերթիկը ա-մալգամայով ծածկվի, այն ժամանակ սուլեման ալիւլիսի մեծ քանակութեամբ պէտք է վերցնել, որ անիրագործելի է թէ սուլեմայի թանդու-թեան և թէ նրա սատիկ թանդուր յատկու-թիւն ունենալու պատճառով: Իսկ սուլեման կար-բօլեան թթու և առաւելուրդը հետեւանքները չէ անցկացնում, քանի որ կարբօլեան թթու և առաւելուրդը արտաթորութիւններին

Թշնամի վարդապետ... կարծես կենդանի լինե՞ր...
— Գուցե ում մասին էք խոսում, վրա է բերում բժիշկը, Պարոնյանի մասին... Կարող էք հաւատալ լինել որ նա մեռած է, և այդ մասին կասկած անդամ չէ կարող լինել, քանի որ ես էի նրան բժշկողը...

— Գա թագաւորական հարկահան կը լինի, առում է մէկը:
— Ոչ, դա անանաբոյժ կը լինի, ասում է երկրորդը:

Հասնում է երրորդ գիւղացին և լսելով իր համալիրացիների վէճը, առաջարկում է լուծել այդ վէճը հետեւեալ շատ դիւրին կերպով:
— Երբ այդ պարոնը նորից կանցնի, դուք երկուսդ մօտեցէ՛ք նրան և ասեցէ՛ք թէ ձեր ատամները ցատում են. եթէ պարոնը ձեզ երկուսիդ էլ կապտակի, — նշանակում է թէ հարկահան է եղել, իսկ եթէ յանձն կառնէ ձեզ երկուսիդ էլ բժշկելու, — նշանակում է թէ անանաբոյժ է եղել:

Ինչպէս յայտնի է հրէաները, որոնք ցրված են ամբողջ աշխարհի երեսին, ամենից քիչ թուով գտնվում են իրանց հայրենիքում, Հրէաստանում: Գրեւ 1741 թ. հրէաների թիւը Պաղեստինայում ընդամենը 8000 հոգու էր հասնում, 1883 թ. ին նրանց թիւը աճեց մինչև 20,000 հոգի, իսկ 1888 թ. վերջերում հրէաների թիւը Հրէաստանում արդէն 70,000 է հասնում:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՄՆՍՏԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊԵՏԵՐՈՒԹՅՈՒՆ, 26 փետրվարի: Այսօր, թագաւոր կայսրի ծննդեան տօնի առթիւ, հանդիսաւոր մաղմանք կատարվեց խաչկիւղի տաճարում: Բարձրագոյն պալատում ընդունելութիւն ելք չը կար: Երէկ Բարձրագոյն ներկայութեամբ, տեղի ունեցաւ այստեղի գերմանական համերգական «Liedertafel» ընկերութեան կօնցերտը, որով ընկերութիւնը տօնում էր իր գոյութեան 50-ամեայ յօբելանսը: Երէկ տեղի ունեցաւ պալատական բարեգործական ընկերութեան հանդիսաւոր ընդհանուր ժողովը, կոմս Իգնատիւի նախագահութեամբ. ներկայ էին եպիսկոպոսներ, և ուրիշ հոգևորական և աշխարհական պաշտօնականները շատերը, ի միջի այլոց և սերբիական սկուպչինայի նախագահ Պաշիչ, որին այս օրերս շնորհված է Ս. Ստանիսլավի I աստիճանի շքանշանը: Պաշիչ, որ կրում էր Ստանիսլավի ժապաւնը, ասեց հետեւեալ ճառը. «Ուրախ եմ, որ կարող եմ շնորհակալութիւն յայտնել ամբողջ ռուս ազգին, իր թափած սուրբ արիւնի համար: Ուրեւ և սերբ ազգերի կապը — սուրբ ազգակցական և հօգնութեւ: Սերբիական ազգը եղել է, և կը լինի ռուս ազգի հաւատարմ բարեկամը, և նրանց ոչ ոք չէ կարող բաժանել: Կեցցէ Ուրաստանը, կեցցէ ռուս ազգը: Պաշիչի ճառը առաջ բերեց երկարատև ծափահարութիւններ: Արևմտագիտելու երգեցիկ խումբը երգեց սերբիական և ռուսաց ազգային օրհներգը: Սլավոնական ընկերութիւնը Պաշիչին իր պատաւօր անդամ ընտրեց: Յիշատեց Չերնոգորայի սովետների սինոդի և սլավոնական ընկերութեան մէջ ստացվել է 200,000 ռուբլի, որից ասելի քան 160,000 ռուբլի արդէն ուղարկված է ըստ պատկանելոյն:

ԻՐԲԻՏ, 26 փետրվարի: Տօնավաճառը վերջանում է:

ԲԵՐԼԻՆ, 26 փետրվարի: Ռուսաց կայսրի ծննդեան տօնի պատճառով, այսօր երեկոյան, գերմանական կայսերական դրոշմի մօտ ճաշկերոյթ կը լինի, որին ներկայ կը լինեն բոլոր պրինցները, և Բերլինում գտնվող թագաւորական տոնի ուրիշ անձինք: Հրաւիրված են նոյնպէս և ռուսաց ղեկավարութեան անդամները և Ալեքսանդր կայսրի անունը գերմանական դորադուրի հրամանատարը: Ռուսաց ղեկավարական եկեղեցում մաղթանքին ներկայ էին այդ զինքի հրամանատարը և օֆիցերները, այլ և պրուսական պալատական բարձր պաշտօնեաները:

ՎԻԵՆՆԱ, 26 փետրվարի: Հաւատացնում են, որ գերմանական կանցլերական ճշմարտութեամբ կանցնի միայն այն դէպքում, երբ իշխան Բիսմարկ հրաժարական տա: Վիեննայի կայսրի և իշխան Բիս-

մարկի մէջ սկզբունքներ վերաբերեալ հայեցակէտերում անդիմադրելի հակասութիւններ կան: Հերբեյում են լուրերը, թէ ռումինական թագաւորական շահագործում է ատտորական իշխանութիւնների մէկի հետ:

ԼՕՆԻՆ, 26 փետրվարի: Հնդկաստանից ըստացված տեղեկութիւններին նայելով, ազգանական էմիրը վճռել է տիրել Կաֆիրիստանը:

ՊԵՏԵՐՈՒԹՅՈՒՆ, 27 փետրվարի: Երէկ, թագաւոր կայսրի ծննդեան օրը Անիկեան պալատի եկեղեցում պալատական հոգևորականութիւնը պատարագ մատուցեց, որին ներկայ էին կայսերական ընտանիքը, պետական խորհրդի մի քանի անդամները, մինիստրները և ամենամօտ ափառանքները: Ասում են, որ համալսարանական ուսանողները ընկերութիւնները, Պետերբուրգի համալսարանի ինքիւրի համեմատ, փոխանակ մայրսին, կը լինեն ապրիլ ամիսը:

ՍՕՖԻԱ, 27 փետրվարի: Բոլշակովսկան կառավարչները կարծում են, որ Կորոլեւան պրինցին ճանաչել տալու նպատակով Վալկովիչի արած քայլերին Բ. Գուգը կը տայ միմիայն անբովանդակ պատասխաններ և ինքը որ և է քայլ պետութիւնների առաջ չի անի: Հեռագրի մէջ ասված է և այն, որ մի քանի օֆիցերներ պահանջում են մտքած, նրանց կասկածելի լինելու պատճառով:

ՊԵՏԵՐՈՒԹՅՈՒՆ, 28 փետրվարի: «Новое Время» լրագիրը հաղորդում է, որ անցաւների նոր կանոնադրութեան նախագիծը վերջնականապէս ընկած է և այս օրերս կառավարիչի պետական խորհրդին: Նիժնեգորսկեան առաջիկայ տօնավաճառի ժամանակ վաճառականութիւնը միտք ունի տնայնագործական արդիւնաբերութիւնների առաջին համառոտական ցուցահանդէս բանալ: «Греханин» լրագիրը հաղորդում է, որ շաբաթ օր, պետական խորհրդի դեպարտամենտների միացեալ նիստում կը սկսի քննվել դժմաւբի ընթերցանի նախագիծը:

ԼՕՆԻՆ, 28 փետրվարի: Ջանդերարից ստացված տեղեկութիւններին համեմատ, Վիսման յարձակումն գործեց և վերցրեց արաբական առաջնորդ Բուշի-Գէրիի ամբարները, առաջնորդը փախաւ: Գերմանացիների կորուստը աննշան է. արաբները շատ մարդիկ կորցրին:

ՀԻՌՍ, 28 փետրվարի: Փօստային առևտրական և ծովային հաղորդակցութիւնների կերպարանափոխութեան գործին վերաբերեալ յանձնաժողովի այսօրվայ հրատարակված զեկուցման մէջ առաջարկվում է, ի միջի այլոց, հաստատել միջազգային գծեր Գէնուայի, Կ. Պոլսի և Օդէսայի մէջ և ապա Վիեննայի, Կ. Պոլսի և Ղուռայական գետափերի մէջ:

Ս. ՊԵՏԵՐՈՒԹՅՈՒՆ ԲՈՐՈՍԱ ՓԵՏՐՎԱՐԻ 27-ԻՆ

Լօնդոնի վրա 10 ֆունտ արծեւ	91	30
Բերլինի վրա 100 մարկ	44	55
Փարիզի վրա 100 ֆրանկ	36	25
Ոսկի արծեւ	7	34
Մաքուային կուպոններ	146	62
Արծաթ	1	8
Բորսային դիսկոնտներ	5 1/2	70
Պետակ. բանկ. 5% տոմս 1-ին շրջանի	100	—
— — — — — 2-րդ —	99	87
— — — — — 3-րդ —	99	87
— — — — — 4-րդ —	99	87
— — — — — 5-րդ —	99	87
— — — — — 6-րդ —	99	87
60/0 ռուկայ ընդամեն	162	50
40/0 ռուկայ փոխառութիւն	—	—
Արեւելեան 50/0 փոխառութիւն 1-ին շրջ.	100	25
— — — — — 2-րդ —	100	37
— — — — — 3-րդ —	100	25
Ներքին 50/0 առաջին փոխառութիւն	238	—
— — — — — երկրորդ —	225	25
— — — — — երրորդ աշն. կալ. բ.	217	25
Պետ. երկաթուղային ընդամեն	—	—
5 1/2% ընդամեն	103	50
40/0 ներքին փոխառ.	—	—
50/0 գրաւ. թղթ աշն. կալ. բանկի.	—	—
40/0 վկայակ. գիւղ. հող. բանկի.	136	75
4 1/2% գրաւական թղթի կալուած.	—	—
— — — — — փոխ. կրեդ. ընկ. մետալ.	143	—
— — — — — թղթադ.	94	87
Պետերբուրգի քաղաքային կրեդ. ընկ. օրկապիսներ	95	87
Մոսկովայի քաղաք. օրկապիսներ	95	50
Օդէսայի — — — — —	95	50
Քիւրիւի — — — — —	—	—
Գրաւ. թղթ. Քիւրիւի կալ. բանկի.	—	—
— — — — — Գուրայիսի — — — — —	—	—

Ս. Պետերբուրգի բորսայի տրամադրութիւնը թուէ:

Խմբագիր-հրատարակող ԳԻՐԳՈՐ ԱՐՄՐՈՒՆԻ

ՅԱՅՈՒՆՆԱՅ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆԸ ԽՈՆԱՐՀԱՐԱՐ ԽԵՂՈՒՄ Է ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ շնորհ բերել կրակի, մարտի 4-ին առաւօտեան 11 ժամին ս. Նշան եկեղեցու ուսումնարանը, ներկայ գտնվելու ընդհանուր ժողով վաճ է ընկերութեան նախահաշիւը քննելու և հաստատելու և վարչութեան չորս անդամ եօթը փոխ-անդամ ընտրելու համար:

ԾԱՆՈՒՑՈՒՄԸ
ԿՈՎԿԱՍՏԱՆ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ պատիւ ունի ձեռնարկելու ի դիտութիւն ընկերութեան յարգելի անդամներին, թէ կրակի, մարտի 4-ին, առաւօտեան 11 ժամին, Քիւրիւի քաղաքային խորհրդի զահիճում նշանված է ընկերութեան ընդհանուր ժողովը, քանի որ փետրվարի 25-ին իր ունեց նիստում ընկերութիւնը չը կարողացաւ աւարտել իր պարապմունքները:

Ս. Վ. Օ. Լ. Ֆ. Շ. Մ. Ի. Տ.
ԻՌԿԱ, Ս. ՊԵՏԵՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՄԱՐՈՒԹՅՈՒՆ
գոյութիւն ունի 1845 թ. ից:
ԱՐԱՂ.—ՔԱՇԵՆՈՒ ԵՎ ՕՂԻԻ ԳՈՐԾԱՐԱՆ
Պատրաստում է մանաւարապէս. ԱՐԲԻԿՕՏԻՆ, ԲԵՆԵԴԻԿՏԻՆ, ՇԱՐՏՐԵՉ, ԿԻԻՐԱՍՈՒՍՅՈՒՆ, հօլանդական, կալաօի, կաֆէի, ՄԱՐԱՍԿԻՆ, մրգերի ԼԻԿԵՐՆԵՐ, ԿԻԵՎԻՆ, նախկիններ, մրգերի շառաւոյկներ, ՏՄԻՆԻՆ ասված արաղ, նմանապէս ՕՂԻ, ՐՕՄ, ԿՕՆԻԱԿ, ԱՐԱԿ, միակ իսկական ԻՌԿԱՅԻ ԿՈՒՆՏԵՆԵԱՆ խոտի ԲԱՂԱՍՏ, ՍՊԻՐՏ, ՄԱՔԻՎԱՅ ՕՂԻ, ԹԹԻՄՈՐ և այլն:
Իմ պատրաստած արտասահմանեան լիկերներ իրանց յատկութեամբ պակաս չեն ներմուծվածներից, բայց անհամեմատ էժան են: Նրանք արժանացան թէ համալսարանային և թէ այլ ցուցահանդէսներում ամենաբարձր պարգևների:
Օղիի գործարանի արդիւնաբերութիւնները ծախվում են բոլոր զինեկաճառանցներում:
Պրէյսկորանտները ուղարկվում են անվարձ:
9—10 (6.) № 1

ՖԻՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԽԱԳԵԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
MESSAGERIES MARITIMES
(ՄԵՍԱԺԵՐԻ ՄԱՐԻՏԻՄ)
Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ԼՕՆԻՆԻ և ԲԱՌՈՒՄԻ մէջ և փոխադարձաբար:
Ուրբաթ, 9/21 մարտի շուրս կը գնայ ԲԱՌՈՒՄԻՑ «EBRE» (ԵԲՐ) շոգենավը, նաւապետ FRAGER (ՖՐԱԳԵ), ղեկավ. Կ. Պօլսի, Մարսէլ, Հալիք և Լօնդոն, մասնաւոր և միջանկիւղ նաւահանգիստները:
Ազգեսները ԲԱՌՈՒՄԻՄ պ. Գ. ԷՍՏԵՆԺԵՐ, ԹԻՖԼԻՍՈՒՄ ԳԵՐԻԳ. ՀԵՋՈՒԹԵԱՆ, ՀԵՋՈՒԹԵԱՆ, իսկ ԲԱՌՈՒՄԻ մէջ ԳՕԼԿԻՆՍԻՍ:
1—2

LE CAUCASE ILLUSTRÉ
RÉDACTEUR EN CHEF: J. MOURIER
IMPRIMERIE MARTIROSIANTZ—TIFLIS
Prix de l'abonnement: Tiflis, un an: 10 roubles; Russie et Caucase: 12 r.; Union Postale: 14 r.
ՊՐՈՎԻԶՈՐ Ա. ՇՏԻԼԵՐԻ ՄԵՋՈՏԵՐԸ
ԱՏԱՄՆԵՐԻ ՑԱՒԻ ԵՒ ՓԶԱՆԱԼՈՒ ԴԵՄ
ՊՕԴՈՒՆԱՆ ԱՏԱՄՆԱԳԵՐ, ԿԱՌԻՆԵՐ 50 ԿՈՊ.
ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԿՕՍԱԿԵՆԱՆ ԱՏԱՄՆԱՑԻՆ ԷԼԻԿՍԻՐ 80 ԿՈՊ.
ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԱՏԱՄՆԱՑԻՆ ՓՈՇԻ 30 ԿՈՊ.
ԳԼԻՍԻՍՈՐ ՊԱՀԵՍ.
ԹԻՖԼԻՍՈՒՄ՝ Գեղադործական ապրանքների կովկասեան ընկերութեան մէջ և պ. պ. Շահ-պարոնեանցի, Մակկէրի, Սէնչի-կօսկու և Ազմուրովի զեղաներում:
1—52 (4.)

Въ редакція газеты „МШАКЪ“ предложены следующие брошюры: 1) „Экономическое Положение Турецких Армянъ“, публикованная лекція Д-ра Г. Арцруни, перев. съ арм. А. Аракелянца. Цѣна 25 к. 2) Die Economische Lage der Armenier in der Türkei ein öffentl. Vortrag von Dr. Grigor Arzruni übersetzt von A. Amiranjanjanz. Preis 25 k. 3) Die Hungersnoth in Türkisch-Armenien ein Vortrag von Dr. Grigor Arzruni übersetzt von Amiranjanjanz. Preis 20 kop.
Иногородные, желающие получить брошюры, благоволят присылать по 30 коп. почтовыми марками, за каждую брошюру. Адресъ. Тифлисъ, Редакція „Мшакъ“ или Tiflis, Redaction „Mschak“.

Дозволено цензурою, Тифлисъ 28 Февраля 1890 г.
Типографія Канцеляріи Главной. Гражд. час. на Кавк., Лорисъ-Меликовск. ул. д. каз.